**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**

**№ ԳՀԱՊՁԲ-21-12/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 16-ը ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՖԻՈՆԱ ՖԼՈՐԱ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Դավթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 12.02.2021թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-21-12/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.12 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ Նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 5 470 600 (հինգ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թ (Հավելված N 2):

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը վաճառողի կողմից ապրանքի մատակարարման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «ՖԻՈՆԱ ՖԼՈՐԱ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք. Երևան, Հ. Ներսիսյան 2/1 |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2052222073541001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 08619935 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| | ԴԱՎԹՅԱՆ |

Հավելված N 1

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Հ/Հ | Գնման առարկան | Չ/Մ | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Քանակը | Ընդհանուր գումարը | Ապրանքի մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. |
| 1 | Ծաղիկներ | հատ | 140 | 13 500 | 1 890 000 | 3 375 | 3 375 | 3 375 | 3 375 |
| 2 | Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեպսակ փոքր) | հատ | 31 600 | 36 | 1 137 600 | 9 | 9 | 9 | 9 |
| 3 | Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեզամբյուղ) | հատ | 7 000 | 349 | 2 443 000 | 250 | 50 | | 49 |
| Ընդհանուր գումարը՝ 5 470 600 (հինգ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ | | | | | | | | | |

Հավելված N 2

**Վճարման ժամանակացույց**

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ. | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | Ծաղիկներ | 03121200/502 | 945 000 | 1 417 500 | 1 890 000 |
| 2 | Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեպսակ փոքր) | 03121210/508 | 568 800 | 853 200 | 1 137 600 |
| 3 | Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեզամբյուղ) | 03121210/510 | 2 100 000 | 2 100 000 | 2 443 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

ՎԱՃԱՌՈՂ

ՖԻՈՆԱ ՖԼՈՐԱ ՍՊԸ տնօրեն

Ա. ԴԱՎԹՅԱՆ